5. աւր Մարեմարոյ :Գ: աւրն հաւրն ու :Գ: աւր մաւրն եւ :Բ: աւր Սիրիբախտին (*)

Սորա տակն են Ուրբաթ Կաւակերտեցու և որպէս սորա չարունակութիւն, Դոլի անուան արձանագրութիւնները, որ ինչպէս ասացինք, նախընթացի հետ մի խումբ են կազմում, ուրեմն և ժամանակով իրարից մօտ. Ուրբաթը այդու հող է նուիրում և երկու ժամ ստանում իւր եղբօր անունով (Ցաւել. Ա. 63)։ Դոլը Երևանի իշխանական տոհմից է, բայց հնարաւորութիւն չունինք որոշելու տոհմի անունը, միայն նորա տոհմակից «Վարդ Երեւանո» յիշուած տեսանք Կեչառիսի արձանագրութեան մէջ (Ցաւել. Ա. 41)։ Երեւանի տանուտէրներն ու պարոնայքը «ի ժամ մահուան Դոլիս գիր յղարկեցաք եւ զհայրն կոչեցաք եւ նա իւր քահա(ն)աեաւքն եւ եպիսկոպոսով հաղորդեցոյց»։ Վանահայրը ընծաներով վերադառնում է մի մի օր նշանակելով Դոլին, Վարդին և Պատրկին (Ցաւել. Ա. 63ա.)։

Մի ուրիշ թուականով արձանագրութիւն Ստեփանոս Աղուանից կաթողիկոսինն է, նոյն պատի հիւսիսային անկիւնում, 1181 թուից.

Պատկեր 135.

1. Ի թ. Ոլ.։ Ես տր. Ստեփանոս Աղուանից կ
2. աթողիկոս եղէ միաբան սբ. ուխտիս Այրից
3. վանաց յառաջնորդութե. հաւր Գրիգորի եւ էտ
4. ու զԱնդրէի առաքելոյ նշխարն եւ սբ. նշան եւ ծնը
5. նդ(?)ոց Յոհան եւ ընակիչք տեղոյս խոստա
6. ցան լինձ զտաւն փոխման Տիրամաւրն :Գ: աւր ՆԱ.? աւուրսն

(*) Երկրորդ տողի մէջ աւելորդաբար կրկնուած է «ետու»։ Զորրորդ տողում «որ եւ խառնեցաւ Մարեմարոյն» խօսքերի իմաստը պարզ չէ բոլորովին. մօտաւոր իմաստն է, թէ Ստեփանոսի և Մարեմարոյ նուիրած հողերը միացուել և մի ամբողջութիւն են կազմել։ Փակագծի մէջ առնուած տառերը մենք ենք լրացրել։